«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ **Սովորողի իրավունքների ու ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանությունը առարկայի** դասավանդման ընթացքում

ՀԵՂԻՆԱԿ՝ **Լուսինե Օհանյան**

ԽՈՒՄԲ/ԱՌԱՐԿԱ/ **կենսաբանություն 3րդ խումբ**

ՍԵՎԱՆ 2023

Բովանդակություն

Նախաբան…..……2
Պատվի, արժանապատվության և գործարար համբավի՝ որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտներիառանձնահատկությունները…..……..……5
Եզրակացություն……1
8
Գրականության ցանկ……....……20

Նախաբան

Անձի արժանապատվությունն իրավական հարթությունում կարելի է քննարկել լայն և նեղ առումներով:

Լայն առումով այն հանդես է գալիս որպես անձի բոլոր իրավունքների նախահիմք, որպես անձի իրավունքների շրջանակը կանխորոշող աղբյուր: Այլ կերպ ասած՝ արժանապատվությունը դիտարկվում է որպես արժեքաբական գործառույթ, իսկ անձի արժանապատվության պաշտպանությունն իրակացվում է միջնորդավորված կերպով՝ այլ հիմնական իրավունքների պաշտպանության միջոցով[1]:

Նեղ՝ իրավունքի իմաստով արժանապատվությունը որպես առանձին իրավունք դիտարկելն է: Այս երկու մոտեցումներն էլ առկա են Հայաստանի իրավական համակարգում:

Հայրենական իրավական համակարգում «անձի արժանապատվություն» եզրույթը սահմանադրաիրավական հարթությունում հիմնականում քննարկվում է որպես բոլոր իրավունքների հիմք[2] , սահմանադրական սկզբունք[3] : Արդյունքում անձի արժանապատվությունն ընկալվում է որպես վերացական, հռչակագրային դրույթ, որի ինքնուրույն իրավական պաշտպանությունն առավելապես դիտարկվում է խոսքի ազատության իրավունքի հետ հարաբերակցության շրջանակներում: Ընդ որում, մասնագիտական գրականության մեջ, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում անտեսվում է անձի արժանապատվության պաշտպանության հիմնարար կառուցակարգերից մեկի՝ բարոյական վնասի ինստիտուտի առկայությունը, հետևաբար՝ դրա համարժեք իրավական կարգավորման անհրաժեշտությունը: Ակնհայտ է, որ հիշյալ մոտեցումները համարժեք չեն մարդու արժանապատվության էությանը, չեն նպաստում դրա բովանդակության ճշգրիտ բացահայտմանը, պաշտպանության համալիր կառուցակարգերի ներդրմանն ու միջազգային իրավունքի սկզբունքներին հնարավորինս համահունչ արժեհամակարգ ձևավորելու խնդրի լուծմանը: Ձևավորված կարծրատիպը հաղթահարելու և անհրաժեշտ իրավական դիրքորոշումներ ձևավորելու նկատառումով, կարծում ենք, նպատակահարմար է ելակետ ընդունել հետևյալ եզրահանգումները՝ 1. «Արժանապատվություն» եզրույթը պետք է դիտարկել իրավափիլիսոփայական հարթությունում՝ մեկնաբանելով այն որպես մարդու անքակտելի, անօտարելի այնպիսի հատկանիշ, որն արժևորում է մարդուն, առանձնացնում է նրան ոչ միայն հասարակական համակարգի մյուս տարրերից, այլև ցանկացած այլ մարդուց:

Արժանապատվության փիլիսոփայական ուսմունքը ձևավորվել է դեռևս Ցիցերոնի աշխատություններում, սակայն իր համակողմանի զարգացումն է ստացել միջնադարյան փիլիոսափայության շրջանակներում : 2. Անձի արժանապատվությունն իրավական հարթությունում ձեռք է բերում երկակի նշանակություն՝ լայն և նեղ առումներով: Լայն առումով այն հանդես է գալիս որպես բոլոր իրավունքների նախահիմք, որպես անձի իրավունքների շրջանակը կանխորոշող աղբյուր: Այլ կերպ ասած՝ արժանապատվությունը դիտարկվում է որպես արժեքաբանական գործառույթ, իսկ անձի արժանապատվության պաշտպանությունն իրականացվում է միջնորդավորված կերպով՝ այլ հիմնական իրավունքների պաշտպանության միջոցով: Այսպիսով, լայն իմաստով արժանապատվության հիմքում դրված է վերջինիս զուտ փիլիսոփայական ընկալումը: «Արժանապատվություն» եզրույթը հենց վերոնշյալ բովանդակությամբ էլ ամրագրվել է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում: «Արժանապատվություն» հասկացությունն իր անմիջական կիրառման համատեքստում, այսինքն՝ իր նեղ իրավական բովանդակությամբ, արդեն չի կարող ընկալվել որպես բոլոր իրավունքների հիմք: Այս դեպքում այն հադես է գալիս որպես ինքնուրույն հասկա ցություն, որը բաղկացած է որոշակի ոչ նյութական արժեքներից, որոնցով անձն օժտված է մարդկային բնույթի որոշակի առանձնահատկությունների ուժով: Այդպիսի ոչ նյութական արժեքների թվին են դասվում մարդու կյանքը, ազատությունը, անձնական կյանքի անձեռնմխելիությունը: 3. Արժանապատվության ուղղակի իրավական պաշտպանությունն արտացոլված է նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածով, որն արգելում է մարդու հանդեպ ցանկացած նվաստացուցիչ վերաբերմունքի դրսևորում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը վկայում է, որ դատարանն ինքնուրույն քննության է առնում արժանապատվության՝ որպես մարդուն պատկանող արժեքի խախտման հարցը և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, հաշվի առնելով գործի հանգամանքները, որոշում է, թե արդյո՞ք տեղ է գտել արժանապատվության խախտում, թե ոչ: Այլ կերպ ասած՝ նաև միջազգային հիշյալ դատական ատյանի իրավակիրառ պրակտիկայում է այն դիտվում միանգամայն ինքնուրույն իրավական արժեք՝ ինքնուրույն իրավական պաշտպանության լծակներով:

Այս հետազոտության ընթացքում կուսումնասիրենք երեխաների իրավունքների պաշտպանված լինելը ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխտողների ու սովորողների այնպիսի

գործունեություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները, կամ ոտնձգություն է արվում նրա պատվին ու արժանապատվություն:

Որոշ վերապահումով կարող է քննարկման առարկա դառնալ ՀՀ-ում անձին պատճառված բարոյական վնասի նյութական հատուցման հարցը: Գտնում ենք, սակայն, որ ՀՀ օրենսդրությունում առկա է նաև բարոյական վնասի նյութական հատուցման հնարավորությունը: Այն գործում է որոշ վերապահումներով, այն էլ դեռևս միայն որոշակի ոլորտներում: Որպես օրինակ կարող է ծառայել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1. հոդվածում նախատեսված իրավակարգավորումը. նշված հոդվածով նախատեսվում է անձի արժանապատվությանը, պատվին կամ գործարար համբավին պատճառված վնասի դրամական հատուցման հնարավորություն. զրպարտության դեպքում նվազագույն աշխատավարձի մինչև 2000-ապատիկի չափով, իսկ վիրավորանքի դեպքում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 1000-ապատիկի չափով: Ընդ որում, նույն հոդվածով նախատեսված է, որ այս դեպքերում փոխհատուցման չափը սահմանելիս դատարանը չպետք է հաշվի առնի վիրավորանքի կամ զրպարտության հետևանքով պատճառված գույքային վնասը: Այն հանգամանքը, որ դատարանը անձի արժանապատվության, պատվին կամ գործարար համբավին պատճառված վնասի փոխհատուցման չափը որոշելիս հաշվի չի առնում պատճառված գույքային վնասը, ուղղակիորեն հավաստում է, որ սույն կանոնակարգման նպատակը գույքային վնասը հատուցելը չէ. այն հանդես է գալիս որպես անձի պատճառված բարոյական վնասի նյութական փոխհատուցման ինքնուրույն դրսևորում:

Պատվի, արժանապատվության և գործարար համբավի՝ որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտներիառանձնահատկությունները

Որպես վերջնական նպատակ մեր առջև դնելով պատվի, արժանապատվության և գործարար համբավի քաղաքացիաիրավական պաշտպանության առանձնահատկությունների բացահայտումը՝ նպատակահարմար ենք համարում լուծել վերոնշյալ նպատակին հասնելու համար մեկ այլ կարևոր խնդիր, այն է՝ հասկանալ, թե ինչ են իրենցից ներկայացնում «արժանապատվություն», «պատիվ», «գործարար համբավ» հասկացությունները, դրանք քաղաքացիաիրավական դաշտ տեղափոխելուց առաջ պարզել, թե ո՞րն է դրանց էությունը, ինչպիսի՞ հարաբերակցության մեջ են միմյանց հանդեպ և վերջապես՝ պատասխանելու այն հարցին, թե իմաստային ի՞նչ նշանակություն է տալիս դրանց Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությունը: Սկսենք հիշյալ հարցադրումների պատասխանների վերհանման ճանապարհը՝ սկզբում ձեռնամուխ լինելով արժանապատվության և պատվի կատեգորիաների էության լուսաբանմանը, առավել ևս հաշվի առնելով, որ քաղաքացիական օրենսդրությունը չի տալիս վերջիններիս դեֆինիցիաները, դրանց հասկացման խնդիրը թողնելով տեսության վրա: Տրամաբանական է թվում որպես աշխատանքի սկիզբ դիտարկել հենց այս հարցերի պարզաբանումը, քանի որ ինչպես դիպուկ նշել է Արիստոտելը, սկիզբն ահռելի նշանակություն ունի դրան հաջորդողի վրա, և այն ճիշտ որոշելը գործի կեսն է հանդիսանում[4]: Պատվի և արժանապատվության հասկացությունների պարզաբանումն ունի չափազանց կարևոր նշանակություն, նկատի ունենալով, որ ցանկացած գիտական հասկացություն իրենից ներկայացնում է շրջապատող աշխարհի երևույթներում գոյություն ունեցող օրինաչափի և էականի մասին բովանդակային պատկերացում: Այս պատճառով էլ դրանց դերի գնահատման ժամանակ առաջնային պլան է մղվում այն հարցը, թե ինչքանով է ճշմարիտ, ողջամիտ և օբյեկտիվ դրանցում արտահայտված իրականության ճանաչումը: Ու թեև կատեգորիաներն իրականության ինչ-որ չափով նաև սուբյեկտիվ արտացոլքն են, այնուամենայնիվ, գիտական առումով կարևոր է դրանց հենց օբյեկտիվ բովանդակությունը: Արժանապատվությունն ու պատիվը այնպիսի կատեգորիաներ

են, որոնց վերաբերյալ միանշանակ և հստակ սահմանումներ առկա չեն՝ հասկանալի պատճառներով: Ինչպես նշել է Հեգելը, որքան հարուստ է բնորոշմանը ենթակա առարկան, որքան ուսումնասիրման ենթակա տաբեր կողմեր ունի, այնքան ավելի տարատեսակ են դրան տրվող բնորոշումները[5]: Արժանապատվությունը, ինչպես և պատիվը, առաջին հերթին բարոյագիտական պատկերացումներ են: Դրանք դասվում են այն երևույթների շարքին, որոնք հոգեհարազատ են յուրաքանչյուրի՝ ամենից առաջ զգայական մակարդակի շնորհիվ: Առաջին հայացքից թվալով շատ մատչելի մեր հասկացողությանը՝ դրանք այնքան բազմաբովանդակ են, որ իրենց արմատներով ձգվում են մինչև զգացողության ու գիտակցության խորքերը և իրենց ազդեցությունը տարածում են շատ ավելի լայնամասշտաբ, քան կարող է թվալ: Ներթափանցելով զգայության, գիտակցության և հետևաբար նաև գործունեության բազմապիսի ոլորտներ՝ դրանք ոչ հազվադեպ որոշիչ են դառնում այս կամ այն իրավիճակում: Անդրադառնալով այնպիսի հիմնարար էթիկական հասկացության, ինչպիսին արժանապատվությունն է, պետք է նշել, որ դրա հաստատումն անցել է բավականին երկար ուղի՝ իր ակունքներով հասնելով մինչև հնագույն ժամանակներ: Այսպես, մարդու արժանապատվության հաստատմանն ուղղված առաջին քայլերից էր դեռևս մ.թ.ա. 6-րդ դարում բուդդայականության առաջացումը, որը մերժեց կաստաների աստվածային ծագումը և ազդարարեց հոգևոր-բարոյական իմաստով բոլոր մարդկանց հավասարությունը: Հասարակության կաստայական կառուցվածքի դեմ հանդես եկան նաև լոկայատների (հետագայում՝ չարվակներ) դպրոցի ներկայացուցիչները՝ պնդելով, որ բոլոր մարդիկ ի բնե հավասար են: Ծագելով հազարամյակներ առաջ և աստիճանաբար զարգանալով՝ արժանապատվության վերաբերյալ պատկերացումներն իրենց հատուկ տեղը զբաղեցրին նաև հայտնի մտավորականների աշխատություններում և տարբեր կրոններում: Այսպես, մարդկային արժանապատվությունը դիտվում է նաև որպես աստվածատուր բարիք: Դա հաստատվում է յուրաքանչյուր մարդու մոտ բարոյականության սկզբի առկայությամբ: Մ. Մ. Ռոզենտալի խմբագրությամբ փիլիսոփայական բառարանում զուգահեռներ են անցկացվում արժանապատվության և խղճի միջև: Ուշագրավ է, որ որոշ լեզուներում, օրինակ՝ կովկասյան լեզվաընտանիքին պատկանող ադիգեական լեզվում, պատիվ և խիղճ հասկացությունները համարվում են հոմանիշներ: Մարդկային արժանապատվությունը որոշվում է նաև նրանով, որ մարդը, ստեղծված լինելով Աստծո պատկերով և նմանությամբ, իր մեջ կրում է Արարչի արժանապատվության մասնիկ: Այս առնչությամբ նշենք, որ բավական ուրույն կերպով է ներկայացնում մարդկային արժանապատվությունը հայտնի մտածող Պիկո դելա Միրանդոլան՝ կապելով այն առավելապես անձի ազատ կամքի հետ և պնդելով,

որ Աստված մարդուն արարել է ոչ թե իր պատկերով և նմանությամբ, այլ տվել նրան ազատություն նույնիսկ իր պատկերը և իր տեղն ու դերն աշխարհում որոշելու հարցում: Համաձայն Ի. Կանտի միայն մարդկությունն ու բարոյականությունը կարող են ունենալ արժանապատվություն: Վերջինս անվերջանալի բարձր է ցանկացած արժեքից. արժանապատվությունը բացարձակապես չի կարելի համեմատել որևէ այլ արժեքի հետ, որպեսզի հանկարծ չոտնահարվի դրա սրբությունը: Կանտն ընդգծում է, որ ցանկացած բանական էակի արժանապատվության հիմքում ընկած է ինքնավարությունը, իսկ մարդու կողմից արժանապատվությանը տրվող միակ գնահատականը հարգանքն է: Որպես արժանապատվության անհրաժեշտ պայման՝ հանրահայտ մտածող Ժ. Ժ. Ռուսսոն ընդգծել է. «Հրաժարվել սեփական ազատությունից՝ նշանակում է հրաժարվել մարդկային արժանապատվությունից, մարդկային բնության իրավունքներից և նույնիսկ պարտականություններից: Հնարավոր չէ որևէ հատուցում այն մարդուն, ով ամեն ինչից հրաժարվում է: Նման հրաժարումն անհամատեղելի է մարդկային բնության հետ, մարդուն կամքի ինքնավարությունից զրկելը հավասարազոր է նրա գործողությունները ցանկացած տեսակի բարոյականությունից զրկելուն»: Ինչպես կարելի է նկատել, վերոնշյալ մտածողների հայացքները վերաբերում են արժանապատվությանը՝ որպես համամարդկային արժեքի, որպես մարդու իրավունքների հիմնաքարի: Այս իմաստով արժանապատվությունը տարբերվում է անձնական արժանապատվությունից, որը վերաբերում է կոնկրետ անհատի: Հաշվի առնելով, որ տվյալ ուսումնասիրության նպատակներից մեկը արժանապատվության հասկացության պարզաբանումն է քաղաքացիաիրավական ասպարեզում և հաշվի առնելով նաև, որ քաղաքացիական իրավունքն այս հասկացությունը դիտարկում է անհատի արժանապատվության տեսանկյունից՝ ուստի հարկ ենք համարում մարդկային և անհատական արժանապատվության հարաբերակցության հիմնահարցին անդրադառնալ առավել հանգամանալից: Մարդու արժանապատվությունն անմիջականորեն բխում է նրա էությունից: Մարդկային արժանապատվությունը, ինչպես և կյանքը, ընդունված չէ կախման մեջ դնել անձի հասարակական կարևորությունից, տարիքից, սեռից, համոզմունքներից և այլն10: Վերոգրյալը պատկերավոր բացատրում է Մ. Նովիցկին՝ նշելով, որ այն բնորոշ է ինչպես նորածնին, ով դեռ ոչինչ չի հասցրել անել, այնպես էլ հանցագործին: Ի տարբերություն մարդկային արժանապատվության՝ անձնական արժանապատվությունը վերաբերում է կոնկրետ անհատի և այն կարող է փոխվել այդ անձի կյանքի ընթացքում: Անձի արժանապատվության զգացման հետ սերտորեն կապված է ինքնահարգման հասկացությունը: Թեև դրանք բավականին մոտ են կանգնած իրար, բայց, այնուամենայնիվ, չեն նույնանում: Արժանապատվության

զգացումը արտացոլում է ինչպես մարդու կարծիքը բարոյական էտալոնին նրա համապատասխանության մասին, այնպես էլ իր մասին այլ անձանց կարծիքի ճշմարտացիության գնահատականը: Եթե ինքնահարգումն ամենից առաջ պատասխանում է այն հարցին, թե «որ արժանիքներիս համար եմ ես ինքս ինձ հարգում», ապա արժանապատվությունը պատասխանում է այն հարցին, թե «ով եմ ես», այսինքն՝ արտահայտում է իր՝ որպես արժեքի նկատմամբ վերաբերմունքը: Բացի այդ համարվում է, որ եթե տվյալ անհատը հարգալից վերաբերմունք է դրսևորում այլ անձանց նկատմամբ, ուրեմն դա նաև ինքնահարգման և ինքնաընդունման նշան է: Մարդկային գիտակցությունն ունակ է արտացոլելու ոչ միայն օբյեկտիվ աշխարհը, այլև ինքն իրեն, իր տեղը և կարևորությունը այդ աշխարհում: Արժանապատվության գիտակցումը հանդիսանում է անհատի ինքնագիտակցման կարևորագույն արդյունքը: Այսպիսով, մարդկային արժանապատվությունը, անցնելով փիլիսոփայական, կրոնական իմաստավորման, իսկ հետագայում նաև պետական-իրավական ճանաչման ուղի, դարձավ հումանիտար գիտությունների, և հատկապես իրավագիտության հիմնական հասկացություններից մեկը: Այժմ անդրադառնանք պատվի հասկացությանը:Պատիվը իր արժանիքների համար մեկի վայելած հարգանքն է, փառքը: Ըստ Կ. Վեբերի խմբագրությամբ իրավաբանական բառարանի՝ բնորոշման պատիվը սահմանվում է որպես ճանաչված լինելու պահանջ հասարակության մեջ16: Հարց է առաջանում՝ իսկ արդյոք անձի համար հարգվելու ձգտումը նույնանում է փառքի հասնելու ձգտման հետ, արդյոք խոսքը մարդկային միևնույն պահանջմունքի մասին է: Այս հարցին պատասխանելու համար կատարենք պատվի մասին հակիրճ պատմական էքսկուրս: Հիշենք, թե ինչպիսի թրթիռով էր վերաբերում աթենացին հասարակության կողմից իր հանդեպ տածած հարգանքին, ինչ անհաս բարձրության վրա էր դնում ձիթապտղի ճյուղը, որը տրվում էր հասարակական խաղերի լավագույն մասնակիցներին, հիշենք նաև, թե ինչպիսի ջանքեր էին գործադրում Հին Հունաստանի փիլիսոփաները համաքաղաքացիների կողմից իրենց որպես անհատականություն ճանաչելու համար: Ինչպես տեսնում ենք, նրանց հատուկ էր անհագ ձգտումը դեպի ճանաչում: Ճանաչված լինելու այս ձգտումը հանգամանորեն վերլուծել է Ֆրենսիս Ֆուկույաման: Իր «Պատմության ավարտն ու վերջին մարդը» աշխատության մեջ նա նշում է, որ ճանաչված լինելու պահանջը նույնքան հին է, որքան առաջին մարդը: Ըստ նրա դեռևս առաջին մարդը ձգտել է ձեռք բերել ճանաչում մեկ այլ մարդու մոտ: Այդ նպատակով վերջինիս հետ նա կռվի մեջ է մտել՝ պատրաստ լինելով նույնիսկ զոհելու սեփական կյանքը: Այդ ռիսկին առաջին մարդը գնացել է ոչ թե ինչ-որ նյութական կամ ֆիզիկական պահանջմունք բավարարելու

համար, ինչպիսին օրինակ՝ նոր տարածք զավթելը, պաշտպանվելը և այլն (ինչը բնորոշ է կենդանիներին), այլ հենց ճանաչվելու համար՝ դիտելով այն որպես ինքնանպատակ: Միայն մարդուն է բնորոշ արյունահեղ պայքարի մեջ մտնելը կյանքը զոհելու սպառնալիքով՝ միայն հանուն նրա,որ ապացուցի դիմացինին, թե ինքը ոչ թե պարզապես բարդ մեխանիզմ է, այլ հանդիսանում է սպեցիֆիկ մարդկային արժանապատվություն կրող[6]: Հարգվելու պահանջմունքը (ինչպես անվանում է Ֆուկույաման՝ «թիմոսը») ի սկզբանե ծագել է որպես սեփական արժեքի գնահատում, որպես ինքնահարգում: Ըստ հեղինակի հենց դրա մասին է խոսել Պլատոնն իր «Պետությունը» աշխատության մեջ, որտեղ առանձնացնելով հոգու երեք մակարդակներ, դրանցում ներառել է նաև այսպես կոչված «կատաղի ոգի»-ն, որը դրդում է մարդուն պայքարել փառքի հասնելու համար19: Փառքին ձգտելու մասին խոսել է նաև Արիստոտելը՝ այն բնորոշելով որպես գլխավորապես պետական գործունեությամբ զբաղվող անհատների գերագույն նպատակ: Այս առնչությամբ հարկ ենք համարում նշել, որ որոշ հեղինակներ ճանաչված լինելու, փառքի հասնելու ձգտումը չեն դիտում որպես մարդուն անվերապահորեն բնորոշ պահանջմունք: Ֆրոմմը դա բացատրում է նրանով, որ տարբեր ժամանակաշրջաններում մարդուն բնորոշ է եղել տարբեր պահանջմունքների բավարարում, օրինակ՝ Վերածնունդի ժամանակշրջանում արդիական դարձած և այսօր այդքան սովորական թվացող փառքի նկատմամբ ձգտումը բնորոշ չի եղել միջնադարի մարդուն: Ըստ Է. Ֆրոմմի դա կապված է տվյալ ժամանակի հասարակության կողմից կոնկրետ արժեքների գովերգման հետ, և մարդը, լինելով սոցիալական էակ, սկսում է ձգտել հենց այն արժեքներին, որոնք առաջնային են տվյալ հասարակության համար20: Ստացվում է, որ հեղինակների կարծիքները կիսվում են այն հարցի առնչությամբ, թե փառքին ձգտումը մարդուն բնորոշ բնական, թե՞ արհեստական պահանջմունք է: Հարցն իրոք հետաքրքրական է: Պարզվում է, որ իրեն շրջապատող մարդկանցից փոխառնելով ինչ որ բանի՝ որպես արժեքի նկատմամբ հայացքներ, մարդը դրանով ինքը իր մեջ սերմանում է այնպիսի պահանջմունքներ, որոնք մինչ այդ չի ունեցել: Կարծում ենք, որ անհրաժեշտ է տարբերակել փառքի նկատմամբ ձգտումը՝ փառասիրությունը, մարդու հարգվելու պահանջմունքից: Եթե մարդու՝ ըստ իր արժանիքների հարգվելու և գնահատվելու ձգտումը հատուկ է բոլորին, ապա փառասիրությունը ՝ ոչ բոլորին (ինչպես ասում էր Էպիկուրը՝ իմաստունը փառք չի ուզում, նա միայն շահագրգռված է իր մասին այլ անձանց կարծիքով այնքանով, որքանով այդ կարծիքն անհրաժեշտ է իր անվտանգության համար): Այդ իսկ պատճառով իրավական պաշտպանության պետք է ենթակա լինի անձի հարգվելու ձգտումը: Անձը ձգտում է, որ իր մասին հանրության անդամները կազմեն դրական կարծիք: Իհարկե, այդ կարծիքը միշտ չէ,

որ կարող է օբյեկտիվ լինել՝ հաշվի առնելով նախ այն, որ մեկի կողմից մյուսի մասին դատելը չի կարող անթերի լինել, քանի որ ճանաչման պրոցեսը ինքն իրենից բավականին բարդ գործընթաց է, և լիարժեք դիմացինին ճանաչելը հնարավորությունների սահմաններից դուրս է թվում, և բացի այդ անհատը կարող է շատ հաճախ թաքցնել իր իրական մոտիվներն ու նպատակները՝ դրանով իսկ իր մասին թյուր կարծիք ձևավորելով հասարակության մեջ: Այսպիսով, բացահայտելով պատիվ և արժանապատվություն հասկացությունների էությունը, դիտարկենք դրանք քաղաքացիաիրավական իմաստով՝ որպես ուղենիշ ունենալով մեր առջև այդ հասկացությունների արդեն լուսաբանված էությունը: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ քաղաքացիական օրենսգիրք) 1087.1 հոդվածում սահմանված է պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանության հատուկ կառուցակարգ: Ուստի հարց է առաջանում՝ ի՞նչ իմաստ է դրել ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը տվյալ հասկացությունների մեջ: Չնայած տարածում գտած այն կարծիքին, համաձայն որի արժանապատվությունը նույնացվում է անձի ինքնագնահատականի հետ,քանի որ քաղաքացիաիրավական առումով ինքնագնահատականը պաշտպանվել չի կարող: Ինքնագնահատականը անձի կողմից ինքն իրեն տրված գնահատականն է, որը, տարբեր հանգամանքներից կախված, կարող է փոխվել. իջնել կամ բարձրանալ: Կարծում ենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածում օրենսդիրը նկատի է ունեցել արժանապատվությունը՝ որպես անհատի հարգվելու օբյեկտիվ պահանջմունք՝ իր ինքնագնահատականին համապատասխան: Ինչ վերաբերում է պատվին, ապա քաղաքացիաիրավական իմաստով այն պաշտպանվում է՝ որպես անհատի հասարակության կողմից իրեն տրված դրական գնահատականը հարգելու պահանջ: Եթե մենք պատվի հասկացության մեջ առանցքային տեղ ենք հատկացնում հասարակական կարծիքին, ապա իրավացիորեն հետևյալ հարցն է առաջանում՝ կարող ենք արդյոք վերագրել այն նաև իրավաբանական անձանց: Խնդիրն այն է, որ պատիվը բարոյաէթիկական կատեգորիա է, և վերաբերում է միայն մարդկային հատկանիշների վերաբերյալ կարծիքին, որպիսիք իրավաբանական անձը լինելով ֆիկցիա՝ ունենալ չի կարող: Այդ իսկ պատճառով օրենսդիրը նպատակահարմար է համարել իրավաբանական անձանց պաշտպանելու համար ներմուծել գործարար համբավ տերմինը: Շուկայական հաբերությունների պայմաններում չափազանց կարևոր նշանակություն է ձեռք բերել գործարար համբավը պատշաճ մակարդակի վրա պահելու հարցը: Համաշխարհային պրակտիկայում ընդունված է կազմակերպության գործարար համբավի արժեքը բնորոշել գուդվիլ / goodwill/ հասկացությամբ: Գ. Դեսմոնդը և Ռ,

Կելլին իրենց «Բիզնեսի գնահատականի կառավարում» աշխատության մեջ տալիս են դրա հետևյալ բնորոշումը՝ գործարար կամ անհատական հատկանիշների այնպիսի համագումար, որը ստիմուլացնում է հաճախորդներին օգտվելու տվյալ կազմակերպության կամ անհատի ծառայություններից, և որոնք բերում են այդ կազմակեպությանն ավելի շատ եկամուտ, քան անհրաժեշտ է ողջամիտ եկամտի ստացման համար»: Գործարար համբավը գործարարության ոլորտում իրավաբանական կամ ֆիզիկական անձի դրսևորած որակների մասին ձևավորված կարծիքն է: Ըստ նշված սահմանման գործարար համբավը հատուկ է գործարարությամբ զբաղվող սուբյեկտներին: Համաձայն Մ. Ն. Մալեինայի ձևակերպած սահմանման գործարար համբավը այնպիսի որակների և գնահատականների համակցություն է, որով դրանք կրողներն իրենց հաճախորդների, սպառողների, երկրպագուների մոտ ասոցացվում և անհատականացվում են այդ ոլորտների այլ մասնագետների հետ: Ըստ Ե. Ա. Սուխանովի գործարար համբավի կապակցությամբ քաղաքացիների մասով պետք է հասկանալ նաև նրանց աշխատանքային որակներին տրվող գնահատականը, մինչդեռ իրավաբանական անձանց մասով՝ միայն առևտրային իրավաբանական անձանց վերագրվող գնահատականը: Այսպիսով, հեղինակների մի մասը հակված է գործարար համբավը սահմանելու որպես բացառապես ձեռնարկատիրական գործունեության ոլորտում անձին տրվող գնահատական, իսկ մյուս մասը՝ առավել տարածական մեկնաբանություն է տալիս այս հասկացությանը՝ դրա մեջ ներառելով նաև աշխատանքային, մասնագիտական որակներին տրվող գնահատականը: Կարծում ենք, որ նշված տարակարծությունն արդյունք է այն հանգամանքի, որ եթե գործարար համբավը դիտարկվեր զուտ որպես գործարար գործունեություն իրականացնող անձանց՝ ֆիզիկական և իրավաբանական, ոչ նյութական բարիք, ապա իրավական պաշտպանության շրջանակներից դուրս կմնային ինչպես ոչ առևտրային իրավաբանական անձինք , այնպես էլ հնարավոր է՝ աշխատող ֆիզիկական անձինք: Այստեղ նպատակարմար է հիշատակել ՀՀ դատական պրակտիկան վերոնշյալ հարցի կապակցությամբ: «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը և Արա Գաբուզյանն ընդդեմ «Բանաձև» ՍՊԸ-ի և Սիրեկան Եղիազարյանի պատվին, արժանապատվությանը և գործարար համբավին պատճառված վնասի հատուցման հրապարակայնորեն ներողություն խնդրելուն և հերքման պարտավորեցնելու պահանջի մասին թիվ ԵԿԴ/1299/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը մասնակիորեն բեկանել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վճիռը, փաստելով, որ ոչ առևտրային կազմակերպությունները ևս կարող

են գործարար համբավ ունենալ: Իսկ որպեսզի այս կապակցությամբ քաղաքացիաիրավական բոլոր սուբյեկտները հավասարապես հնարավորություն ունենան դիմելու իրավական պաշտպանության, ապա նպատակահարմար կլիներ ներմուծել մի այնպիսի հասկացություն, որը հնարավորություն կտար նաև գործարար գործունեություն չիրականացնող կազմակերպություններին, ինչպես նաև աշխատող ֆիզիկական անձանց, հավակնելու իրավական պաշտպանության: Որպես այդպիսի հասկացություն կարող էր ծառայել օրինակ՝ հեղինակությունն հասկացությունը, առավել ևս, որ այն ունիվերսալ է և իր մեջ ներառում է ոչ միայն աշխատանքային, գործնական հատկանիշներին տրվող գնահատական, այլ ցանակցած այլ հատկանիշների կարող է վերաբերվել: Հեղինակությունը անձի կողմից ձեռքբերված հասարակական գնահատականն է, հասարակական կարծիքը անձի հատկանիշների, առավելությունների և թերությունների մասին:

«Հոդված 19. Պատվի, արժանապատվության, գործարար համբավի պաշտպանությունը

1. Անձի պատիվը, արժանապատվությունը, գործարար համբավը ենթակա են պաշտպանության այլ անձի կողմից հրապարակայնորեն արտահայտված վիրավորանքից և զրպարտությունից՝ սույն օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված դեպքերում ու կարգով:

2. Քաղաքացու պատվի և արժանապատվության պաշտպանությունը շահագրգիռ անձանց պահանջով թույլատրվում է նաև նրա մահից հետո:

3. Եթե անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող տեղեկությունները տարածած անձին պարզելն անհնար է, ապա անձը, ում մասին նման տեղեկություններ են տարածվել, իրավունք ունի դիմելու դատարան՝ տարածված տեղեկություններն իրականությանը չհամապատասխանող ճանաչելու պահանջով:»[7]

Իրավունք, հասարակական հարաբերությունների կարգավորիչներից մեկը, որը առաջացել է հասարակության շերտավորմանը զուգընթաց՝ դասակարգային հարաբերությունների ծագման ընթացքում՝ որպես տիրող դասակարգի՝ օրենքի աստիճանի բարձրացված կամքի դրսևորում, որն սկզբում արտահայտվել է սովորույթներում, հետագայում դարձել օրենք:

Ազատությունը-գաղափար է, որը արտացոլում է սուբյեկտի վերաբուրմունքը իր իսկ ակտերին, որի ներքո նա հանդիսանում է դրանց որոշիչ պառտճառը: Մարդու և քաղաքացու իրավունքների մասին հռչակագրում մարդու ազատությունը մեկնաբանվում է որպես որպես իրավունք՝ անել այն ամենը, ինչը չի վնասում

ուրիշներին:
Պատիվ-բարոյա-էթիկական սկզբունքների ամբողջությունը, որոնցով մարդը ղեկավարվում է իր հասարակական և անհատական կյանքի վարքագծում, արժեքների, վաստակների և այլնի համար վայելած հարգանք, ընդհանուր ճանաչում, հեղինակություն:
Արժանապատվություն- մարդու իրավունքների հիմնարար հասկացություն է, որը բարձրագույն և առանցքային արժեք, մարդու անքակտելի և անօտարելի իրավունք, որը հատուկ է նրան ծնված օրից:

Զրպարտության պարագայում անձի վերաբերյալ ներկայացված են լինում իրականությանը չհամապատասխանող սուտ, անհիմն փաստեր, տվյալներ, որոնք լինում են վերացական, բացի այդ, անձի վերաբերյալ ոչ փաստացի տվյալները ներկայացված են լինում հրապարակային, որոնք արատավորում են անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:
Հրապարակային արտահայտությունը կամ հրապարակային ներկայացումը կարող է դրսևորվել տպագրության, ռադիոյի, հեռուստատեսության միջոցով, համացանցի միջոցով տարածմամբ ինչպես նաև հեռահաղորդակցության այլ միջոցների օգտագործմամբ, հրապարակային ելույթներով, կամ որևէ այլ կերպ թեկուզ երրորդ անձի դրանց հաղորդակից դարձնելով:
Զրպարտություն չի կարող համարվել այն հայտարարությունը, որը կատարվել է ոչ հրապարակային՝ երբ անձը զրպարտվել է առանց երրորդ անձանց ներկայության: Պետք է նկատի ունենալ, որ զրպարտություն չի կարող համարվել փաստական հիմք ունեցող գնահատող դատողությունը:
Այսինքն, վերացական կամ ընդհանրական ձևակերպված տեղեկությունները չեն կարող համարվել զրպարտություն: Անհրաժեշտ է նշել, որ պատվի և արժանապատվության վեճերով դատական կարգով պաշտպանությունը կարող է իրականացվել վիրավորանքի կամ զրպարտության մասին անձին հայտնի դառնալու պահից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան վիրավորանքի կամ զրպարտության պահից վեց ամսվա ընթացքում:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը դասում է ոչ նյութական բարիքների շարքը: Ոչ նյութական բարիքները թվարկված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162-րդ հոդվածում: Դրանց, ինչպես նաև հոդվածում տեղ չգտած այլ՝ ոչ նյութական

բարիքների կապակցությամբ առաջացող իրավունքներն ընդունված է անվանել անձնական ոչ գույքային իրավունքներ: ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը չի տարբերակում անձնական, ոչ գույքային իրավունքները և դրանց օբյեկտ հանդիսացող ոչ նյութական բարիքները29: Եվ ասվածը հաստատվում է ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162-րդ հոդվածի բովանդակությամբ, այլև օրենսգրքի հենց 1-ին հոդվածով, որի 5-րդ մասի համաձայն մարդու անօտարելի իրավունքների ու ազատությունների և այլ ոչ նյութական բարիքների իրականացման ու պաշտպանության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով, եթե այլ բան չի բխում այդ հարաբերությունների էությունից: Ինչպես երևում է, այստեղ ոչ նյութական բարիքները տարբերակված չեն անօտարելի իրավունքներից: Կարծում ենք նաև, որ ավելի ներդաշնակ կարգավորման համար նպատակահարմար կլիներ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում օգտագործել կամ անձնական ոչ գույքային իրավունքներ և ոչ գույքային բարիքներ հասկացությունները, կա՛մ անձնական ոչ նյութական իրավունքներ և ոչ նյութական բարիքներ հասկացությունները, որպեսզի ակնհայտ լինի օբյեկտի և դրա կապակցությամբ առաջացող իրավունքի փոխկապվածությունը :

Երեխայի իրավունքները մարդու իրավունքների անքակտելի մաս է և պաշտպանվում է միջազգայիյն և ազգային մի շարք օրենսդրական նորմերով: «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան վավերացրել են աշխարհի բազմաթիվ պետություններ: Նրանք պարտավորվել են հարգել, պաշտպանել և իրականացնել Կոնվենցիայով սահմանված իրավունքները: Պետությունները համաձայնել են, որ երեխաներն են յուրաքանչյուր հասարակության ու պետության ապագան, որ երեխան օժտված է իրավունքներով և որ իրենք՝ պետությունները, պարտավոր են պաշտպանել երեխայի իրավունքները: Երեխաների իրավունքների մասին ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն յուրաքնչյուր երեխա ունի պատվի և արժանապատվության իրավունք: Շատ կարևոր է, որ շախմատ խաղացող երեխաներին սովորեցնել պարտությունից հետո շնորհավորել մրցակցին, ինչը երբեք չի նսեմացնի իր պատիվն ու արժանապատվությունը: Մյու կողմից էլ հաղթող երեխան չպետք է մեծամտանա և նվաստացնի պարտվող երեխայի արժանապատվությունը, քանի որ հաղթանակը և պարտությունը հարաբերական երևույթներ են

- Նույն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ երեխաներն ունեն հավասար իրավունքներ՝ անկախ իրենց և ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների (որդեգրողների, խնամակալների կամ հոգաբարձուների) ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ

դրությունից, կրթությունից, բնակության վայրից, երեխայի ծննդյան հանգամանքից, առողջական վիճակից կամ այլ հանգամանքից: Շախմատում երկու կողմերն էլ ունեն հավասար իրավունքներ, հավասար են նաև կողմերի խաղաքարերը: Յուրաքանչյուր կողմ ունի քայլի հերթականության իրավունք: Հազարավոր տարբերակների մեջ երեխան ազատ է ընտրելու իր նախընտրած տարբերակը:

- Ըստ ՀՀ Սահմանդրության 29-րդ հոդվածի՝ Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է: Շախմատ խաղը իր մեջ պարունակում է խտրականություն՝ առաջին քայլի իրավունքը սպիտակներին է և սևերը ձգտում են հասարեցնել խաղը: Խտրականությանը վեարցնելու համար դասաժամին երեխաները խաղում են շախմատ մեկ սպիտակ, մեկ սև գույներով:

Շախմատ առարկան լավագույն կերպով պաշտանում է հենաշարժողական խնդիր ունեցող երեխաների իրավունքները: Քանի որ երեխան չի կարող մոտենալ ուցադրական տախտակին և քայլ կատարել, նրանք կարող են տեղից արտաբերել քայլը՝ Թa6, Նg7….. :

Դպրցոում դասավանդում եմ հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխաների, և այդպիսի խնդիր ունեցող երեխաներ ունեցող դասարաներում ՝համապատասխան պարագաներով ինքս եմ գնում նրանց դասարան, այլ ոչ թե նրանք շախմատի կաբինետ:

ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի համաձայն երեխա ունի կարծիքն ազատ արատահայելու իրավունք: Դասաժանի պետք է սկզբում շախմատային տրամագրի լուծումը հարցնել ցածր առաջադիմություն ունեցող երեխային, այնուհետև առավել ուժեղագուններին կամ պահանջել երեխաներին՝ խնդրի լուծումը գրել տետրերում և մոտենալ նրանցից յուրաքանչյուրին՝ այսպիով լսելի դարձնել նրանց տեսակետը և ապահովել նրանց հավասար ներգրավածությունը դասապրոցեսին:

Դասապրոցեսի ընթացքում առաողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորումը կախված է ուսուցիչ-աշակերտ, աշաակերտ-աշակերտ հարաբերություններից: Անդրադառնանք դրանցից յուրաքանչյուրին առավել մանրամասն:

Ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունը երկողմանի գործնթաց է, որի ընթացքում կողմերը փոխադարձաբար ներազդում են միմյանց: Գործընթացի հաջող ընթացքի գլխավոր պատասխանատուն ուսուցիչն է, ուսուցիչը պետք է լինի երեխայի

ավագ ընկերը, երեխան պետք է հասկանա, որ իրեն սիրում են: Ուսուցիչը պետք է ունենա լեզվական բարձր մշակույթ, բացառի երեխաների իրնքանասիրությունը և արժանապատվությունը վիրավորող բառերի գործածությունից, հաշվի առնի երեխայի տարիքը և տարիքից բխող առանձնահատկությունները, դիտողությունները պետք է անել առանձին: Չնայած ուսուցչի հմտություններին՝ դասապրոցեսի ընթացքում հաճախ են լինում կոնֆլիկտային իրավիճակներ: Մանկավարժական կոնֆլիկների լուծումը սկսվում է նրանից, թե ուսուցիչը ինչ է տեսնում աշակերտների արարքի մեջ: Ուսուցիչը երեխային պետք է դիտարկի իր տարիքային առանձնահատկություններով, նրա կատարած արարքների մեջ դիտավորություն չփնտրի: Կոնֆլիկտի ժամանակ ուսուցիչը պետք է հասկան երեխայի հոգեբանությունը, հոգեկան ապրումները՝ տվյալ պահին և վեր հանի երեխայի կատարած արարքի պատճառը: Պիտյուկովը մանկավարժական կոնֆլիկտի հասունացումը դասակարգում էր հետևյալ կերպ.

1.Դժգոհություն-տարաձայնություն

2.Հակառակություն

3.Ընդիմություն

4.Հակամարտություն, պայքար

5.Հարաբերությունների խզում, հարկադրաություն: Ուսուցիչը պետք է ամեն ինչ անի, որպեսզի հարաբերությունների հակասությունը չհասնի վերջին հակամարտության փուլին:

Իրավիճակ 1-ին

Ա դասարանում երեխաներից մեկը չի տարբերում « միաբջիջ» և « բազմաբջիջ» հասկացությունները: Ուսուցիչը ասում է. «Տգետ չես տարբերակում միաբջիջը բազմաբջիջից » : Տվյալ իրավիճակում ուսուցիչը հրապարակայնորեն վիրավորում է երեխային, նսեմացնում նրա պատիվը և հիմք ստեղծում՝ երեխաների կողմից ևս դասընկերոջը վիրավորելու համար:

Լուծում՝ ուսուցիչը պետք է նրբորեն, քանքուշ բառերով երեխային բացատրի երկու հասկացությունների տարբերությունը:

Աշակերտ-աշակերտ

Դասարանում յուրաքանչյուր երեխայի կարգավիճակ ունի իր յուրահատուկ չափանիշները,որոնցով ընկերների շրջանում ձևավորվում են այսպես կոչված «աստղեր»,-ը «գերադասելիներ»–ը, « մերժվածներ»-ը, «մեկուսացածներ »-ը:

Աստղերը, այն երեխաներն են, որոնք երեխաների շրջանում վայելում են մեծ

հեղինակություն: Գերադասելիները՝ համադասարանցիների հետ լայն կապեր ունեցողներն են: Մերժվածները նրանք են, որոնց հետ երեխաների մեծամասնությունը չի ուզում շփվել, սակայն նրանք ցանկանում են շփվել: Մեկուսացածները այն երեխաներն են, ովքեր նախաձեռնություն չեն դրսևորում շփվել համադասարանցիների հետ:

Աշակերտների շրջանում կոնֆլիկտները ծագում են հետևայալ խմբավորումների պատճառով: Այստեղ մեծ է նաև ուսուցչի դերը, եթե վերջինս դասի ընթացքում մշտապես քննադատում , նկատողություն է անում կամ հակառակը՝ անընդհատ գովեստի խոսքեր է ասում երեխասներից որև մեկին աշակերտները նույնպես իրենց դասընկերոջը սկսում են պիտակել «լավ» կամ « վատ»:

Իրավիճակ 1

Ա դասարանում երեխներից մեկը ունի ցածր առաջադիմություն բոլոր առարկաներից: Ամեն անգամ, երբ տվյալ աշակերտը պատասխանում էր կենսաբանության դասը, դասընկերները սպասում են, որ նա կտա սխալ պատասխան և իրենք կսկսեն ծաղրել ընկերոջը: Կենսաբանության դասաժամին ուսուցիչը հարցնում է ՝ ինչով են տարբերվում միմյանցից թռչուններն ու սողունները: Երեխան չի կարողանում պատասխանել հարցին, որը պատճառ է դառնում դասընկերների ծաղրանքին:

Լուծում ՝ երեխային շարունակաբար կանչել գրատախտակի մոտ և պաստառների, մուլյաժների միջոցով բացատրել տարբերությունը: Այսպիսով՝ բարձրանում է երեխայի հեղինակությունը համադասարանցիների շրջանում և պաշտանվում է երեխայի պատիվն ու արժանապատվությունը:

Իրավիճակ 2

Բ դասարանում անառողջ միջավայր է, երեխաները բաժանվել են խմբերի և մեկը մյուի հետ չեն շփվում, միմյան վիրավորում են:

Լուծում՝ երեխաներին բաժանել խմբերի այնպես, որ միմյանց չսիրող ու վիրավորող երեխաները հայտնվեն նույն խմբում: Բաժանված խմբերով գրեին կենսաբանության խնդիրներ, որի ընթացքում խմբի երեխաները, միմյան կարծիք հարցնելով, պետք է տային խնդրի լուծման տարբերակներ: Խմբային աշխատանքում կարևորել խմբերի կարգապահությունը և կարգապահությունը խախտող երեխաների խմբից հանել միավորներ:

Եզրակացություն

Թեմայի ուսումնասիրության ընթացքում հանգել ենք հետևյալ եզրահանգումներին.

Դասապրոցեսի ընթացքում երեխայի պատվի և արժանապատվության պաշտպանության գլխավոր պատասխանատուն ուսուցիչն է: Ուսուցիրը յուրաքանչյուր երեխային պարտավոր է հարգել և ընդունել իր բնածին առանձնահատկություններով, դասավանդվող նյութի ընթացքում բերված օրինակները չպետք է նսեմացնեն ֆիզիկական, մտավոր աձանձնահատկություներ ունեցող կամ այլ ազգություն ու կրոն ունեցող երեխաներին: Երեխայի փոքրիկ չարաճճիություններին պոետք է վերաբեվել ներողամտորեն և հումորով: Ուսուցումը պետք է լինի երեխայակենտրոն: Պարտադիր է՝ դասին ներգրավել ամբողջ դասարանին, լսել նրանցից յուրաքանչյուրի կարծիքը: Ուսուցչի կողցմից կիրառվող պատիժը և խրախուսումը պետք է միտված լինի խթանելու ուասումնական գործընթացը՝ հաջողության հասնելուն: Պատիժը պետք է զերծ լինի երեխայի պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող տարրերից:

Հայաստանի Հանրապետությունը անձի պատվի և արժանապատվության պաշտպանության վերաբերյալ իրավակարգավորումների ու իրավակիրառ պրակտիկայի զարգացման բավականին երկար պատմություն ունի: Այսպես, սկզբնական շրջանում ՀՀ քրեական օրենսգիրքը նախատեսում էր պատասխանատվություն վիրավորանքի ու զրպարտության համար, այն համարելով անձի պատվի ու արժանապատվության դեմ ուղղված հանցագործություն, սակայն իրավակիրառ պրակտիկան ցույց տվեց, որ վիրավորանքի ու զրպարտության քրեականացումը՝ որպես պատվի ու արժանապատվության պաշտպանության միջոց այնքան էլ արդյունավետ չէր: Մասնավորապես՝ վիրավորանքի և զրպարտության հատկանիշներով հարուցված քրեական գործեր գրեթե չկային, ստացվում է, որ թեև առկա էր իրավակարգավորում սակայն, գործնականում անձի կողմից իր իրավուքների պաշտպանության տեսանկյունից այն անարդյունավետ էր, ինչը, կարծում ենք՝ առաջին հերթին պայմանավորված էր այն հանգամանքով, որ քրեական պատասխանատվությունը հիմնականում պատժիչ բնույթ ուներ և ըստ էության, տուժած անձին իր իրավունքների լիարժեք վերականգման հնարավորություն չէր ընձեռնում, օրինակ՝ զրպարտության դեպքում հերքում պահանջելու և այլն: Մյուս կողմից՝ վիրավորանքի և զրպարտության քրեականացման պայմաններում առավել բարդ էր կարգավորել լրատվական դաշտի գործունեությունը՝ հաշվի առնելով, որ իրավաբանական անձի միջոցով

գործունեություն ծավալող լրատվամիջոցները ենթակա չէին քրեական պատասխանատվության: Արդեն, 2010 թվականի մայիսի 18-ին ընդունվեց վիրավորանքն ու զրպարտությունը ապաքրեականացնող օրենքը, որին հաջորդեցին ՀՀ քաղաքացիական օրենսգրքում կատարված փոփոխությունները՝ սահմանելով պատիվը, արժանապատվությունը, գործարար համբավը հրապարակայնորեն արտահայտած վիրավորանքից ու զրպարտությունից պաշտպանելու հնարավորություն և պատճառված վնասի համար դրամական փոխհատուցում պահանջելու իրավունք:

Պատվի, արժանապատվության ու գործարար համբավի պաշտպանությունը առանձնահատուկ բնույթ է ստանում, երբ հայցվում է պաշտպանություն հասարակական, քաղաքական գործիչների, պաշտոնատար անձանց վերաբերյալ արված վիրավորանքից կամ զրպարտությունից: Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր մի շարք որոշումներում ամրագրել է՝ «Հանրային ու քաղաքական գործիչների կողմից ընդունելի քննադատության ավելի լայն շրջանակ, քան մասնավոր անձանց պարագայում» սկզբունքը: Միաժամանակ, նշված մոտեցումը որևէ կերպ չպետք է դիտարկել բացարձակ ու թեև հասարակական-քաղաքական գործունեություն ծավալող անձինք պետք է հանդուրժողաբար մոտենան իրենց հայացքներին ու գործունեությանը տրվող գնահատականներին, սակայն այդ գնահատականները չպետք է պարունակեն հանրային գործչի անձին ուղղված վիրավորանք կամ զրպարտություն:

Արատավորող կարող են լինել այնպիսի տվյալները, որոնք բովանդակում են ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից գործող օրենսդրության պահանջների խախտման, անարդարացի վարքագծի դրսևորման, անձնական, հասարակական կամ քաղաքական կյանքում էթիկայի պահանջներին հակասող վարքագծի դրսևորման, տնտեսական կամ ձեռնարկատիրական գործունեության ժամանակ անբարեխղճության, գործարար շրջանառության սովորույթների խախտման և այլ տեղեկություններ, որոնք չեն հիմնավորվում վերաբերելի և թույլատրելի ապացույցներով (իրական չեն), նվաստացնում, նսեմացնում են անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Գրականության ցանկ

1. Առաքելյան Ն.: «Անձի արժանապատվության սահմանադրական կարգավիճակը», էջ 36:
2. Տե՛ս Co.Co..A..Comparing Constitutional Adjudication, Summer School on Comparative Interpretation of European Constitutional Jurisprudence, 2nd Edition – 2007, էջ՝ 2 The Dignity of Man in Constitutional Adjudication:
3. Տե՛ս В.Я. Марченко, Достоинство личности в конституционно-правовом измерении, М.2002, автореферат. (Աղբյուրը՝ http://www.dissercat.com/ content/dostoinstvo-lichnosti-v-konstitutsionno- pravovom-izmerenii):
4. Տե՛ս Аристотель, , http://lib.ru/POEEAST/ ARISTOTEL/ nikomah.txt:
5. Տե՛ս Энциклопедия философских наук, т. 1, М., 1974 թ., էջ 413:
6. Տե՛ս Фукуяма Ф., «Конец истории и последний человек», http://lib.ru/POLITOLOG/ FUKUYAMA/konec_istorii.txt : 19 Տե՛ս Фукуяма Ф., նշված աշխ., http://lib.ru/POLITOLOG/ FUKUYAMA/konec_istorii.txt: 20 Տե՛ս Фромм Э., «Бегство от свободы», http://lib.ru/PSIHO/FROMM/ fromm02.txt:
7. https://www.arlis.am/documentview.aspx?docid=58945